Վերոյիշեալ 274 հազար հայերից, վկայում է Հաքստհաուզէն «1/3-ից մինչեւ 1/2-ը ընդամէնը 20 տարի սրանից առաջ են Պարսկաեւ Տաճկահայաստանից ներդաղթել»:

Ասել է ուրեմն, որ երբ Արեւելեան Հայաստանի այդ մասերը Ռուսաստանին անցան, նրանց վրայ նստած էր ոչ աւելի քան 150-175 հազար չունչից բաղկացած հայկական մի փոքր հատուած միայն:

Եւ սակայն յայտնի է, որ մեր բնաշխարհը անցեալում եղել է խիտ բնակութիւն ունեցող մի երկիր, այլապէս նա չէր էլ կարող Երեւան բերել իր պատմական քաղաքակրթութիւնը:

Հաքստհաուզէն իրաւամբ նկատում է այդ առթիւ հետեւեալը.—

«Այն մասին, որ հնումը թերեւս ոչ պակաս քան տասն անգամ աւելի խիտ բնակութիւն է ունեցել այս երկիրը, վկայում են աւերուած անթիւ այգիների հետքերը, որոնք տարածւում էին մինչեւ 4250 ոտք բարձր վայրերը... Հաղիւ կարող է մարդ գաղափար իսկ կազմել այն ջրանցքների եւ ջրամբարների թուի մասին, որոնց հետքերը այսօր էլ կան: Դրանք բոլորը վկայում են այն մասին, որ հնումը խիտ են բնակուած եղել այդ վայրերը. այլապէս շռայլութեան համար չէ, որ շինւում են ջրանցքները»:

Հապա ի՞նչ է եղել երկրի հայութիւնը, հին ու բնիկ տարրը:

Մեր պատմութեան մէկ տխուր դիծն է անցողակի չօշափում Հաքստհաուզէն ասելով, թէ նա, հայ տարրը, շարունակ տարագրուել ու գերեվարուել է իր հայրենի երկրից, իսկ նրա տեղը բերուել նստել են օտարներ:

Ահա Հաքստհաուզէնի խօսքը.

«Բռնի ոյժով գերեվարուած հայերի փոխարէն՝ թաթարներ եւ քրդեր են ներս բերուել»:

Յատկապէս Երեւանի խանութեան մասին խօսելով՝ Հաքստհաուզէն նշում է, որ այդտեղ «բնակչութեան կէսը կազմում են եկուոր օտար տարրերը՝ թաթարները եւ քրդերը:

Մենք տեսանք վերը, որ Հաքստհաուզէն ռուսական Հայաստանի կամ «Հայկական Շրջանի» (Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւններ) ամբողջ ազգաբնակութիւնը հաշուում է 164,500, որից հայեր՝ 110,000, իսկ մնացածը՝ թաթարներ, քրդեր եւայլն»:

Այս երկու տուեալների մէջ, տեսնում ենք, հակասութիւն կայ:

Վերջինին նայելով՝ հայ տարրը կազմել է ողջ բնակչութեան 2/3-ը այսինքն՝ 164,500-ից 110,000, իսկ ըստ առաջին տուեալի՝ միայն կէսը եւ ոչ աւելին: Թէեւ այս վերջին տուեալը Երեւանի խանութեան է վերաբերում, բայց նա նոյնչափ եւ աւելի պիտի համապատասխանէր նաեւ Նախիջեւանի խանութեան, ուր հայ տարրը շատ աւելի թոյլ կերպով է ներկայացուած եղել, քան Երեւանում:

Այնպէս որ 19-րդ դարի առաջին կէսին «Հայկական Շրջանի» բնակչութեան*) իսկապէս որ հազիւ կէսն է եղել հայերից բաղկացած:

Յայտնի է արդէն, որ այդ յարաբերութիւնը նոյնը մնաց մինչեւ վերջին տարիները: Ամբողջ Երեւանի նահանգում, որ «Հայկական Շրջանի» (19-րդ դ. 1-ին կէսում) 18,620 ք. վերստ տարածութեան դիմաց ունէր աւելի՝ 23,194 քառ. վերստ տարածութիւն, հայութիւնը դեռ 1914-ին կազմում էր ողջ ազգաբնակութեան ոչ աւելի քան 57 տոկոսը (մահմեդականներ՝ 39 տոկոս, մնացածը՝ այլ տարրեր), այսինքն՝ կէսից քիչ աւելին միայն:

* * *

Պարսկաստանից եւ Տաճկաստանից ռուսական Հայաստան գաղթած հայերի մասին հետեւեալ թուերն է հաղորդում Հաքստհաուզէն (Ա. 217).—

«Ռուս-պարսկական եւ ռուս-տաճկական վերջին հաշտութիւններից յետոյ, (Թուրքմանչայի եւ Ադրիանապոլսի) 1826-1829, Ռուսաստանին անցած երկրամասերից գաղթեց տաճիկների (Ախալցխայից) եւ պարսիկների մեծ մասը, եւ ընդհակառակը նոյն այդ վայրերը ներգաղթեցին մեծ թուով հայեր: Օրինակ՝ Տաճկաստանից Ախալցխա գաղթեցին

*) «Հայկական Շրջանի» մէջ էին մտնում, ինչպէս ասացինք, Երեւանի խանութիւնը (յետագայի Երեւանի նահ.ի Երեւան, Նոր-Բայազիդ, Էջմիածին, Սուրմալու եւ մասամբ Շարուր գաւառները) եւ Նախիջեւանի խանութիւնը (Նախիջ. գաւառը եւ Շարուրի մի մասը):